# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 69 (24622), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (۲٤٦۲۲) ٦۹ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՇԱԲԱԹ

13 ԱՊՐԻԼԻ 2024

شنبه – ۲۵ فروردین ۱۴۰۳

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


ԱԿՆԱՐԿ

## ԻՍՐԱՅԷԼԻ ԲԱՑ ՆԵՐԻՆ ՈՒ ԻՐԱՆԻ ԿՈՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԱՀՆ ՈՒ ՍԱՐՍԱՓԸ

**Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ**

*Դամասկոսում Իրանի հիւպատոսութեան շէնքի վրայ Թել Աւիւի յարձակումից յետոյ տարածաշրջանն ու աշխարհը, յատկապէս՝ Իսրայէլն ու նրա գլխաւոր հովանաւորը՝ ԱՄՆ-ը, սպասում են Իրանի պատասխան գործողութեանը: Քննարկումներն հիմնականում այն մասին են, թէ ինչպէ՞ս է տեւելու Թեհրանի ռազմավարական համբերութիւնը կամ ինչ բնոյթի է լինելու Իրանի պատասխան գործողութիւնը, դրանք լայնօրէն ծաւալւում են մեդիա հարթակներում, եւ տարաբնոյթ կարծիքներ են ձեւաւորել Իրանի նախատեսւող գործողութիւնների բնոյթի եւ բովանդակութեան վերաբերեալ:*

*Այս համատեքստում արեւմտեան լրատւամիջոցները քննարկել եւ քննարկում են գրեթէ հնարաւոր բոլոր տարբերակները: Այս հաւասարման անյայտը սակայն, շարունակում է մնալ այն, թէ՝ Թեհրանը երբ կիրականացնի պատասխան հարւածը: Իրադարձութիւնների ընթացքից թւում է, թէ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը փորձում է խելամտօրէն օգտագործել առիթը:*

*Կան մի քանի գործօններ, որոնք ակնյայտ են դարձնում, որ Իրանը չի շտապում Իսրայէլին հարւածելու գործում:*

*Նախ. փաստ է, որ Դամասկոսում Իրանի հիւպատոսութեան վրայ յարձակման յաջորդ իսկ պահից, Իսրայէլը նախապատրաստւել է Թեհրանի պատասխան գործողութեանը: Ռազմական պատրաստւածութեան բարձր մակարդակի պահպանումն ու սպառողական վիճակը միանշանակ ուժերը մաշեցնող ու սպառող վիճակ է Թել Աւիւի համար, որն առանց այն էլ մխրճւած է մաշողական պատերազմում՝ Գազայի հատւածում: Ժամանակը դեռեւս գործում է Իրանի օգտին, որը կարող է ցանկացած պահի անակնկալի բերել թշնամուն: Այնպէս, որ անհրաժեշտ է սպասել յարմար պահի, եւ պէտք չէ հապճեպ գործել:*

*Երկրորդ. Սիոնիստական վարչակազմը գտնւում է իր պատմութեան ընթացքում ամենախոցելի վիճակում: Մաշւած բանակ, կաթւածահար վիճակում յայտնւած կառավարութիւն, պառակտւած ու ամենաներքեւի մակարդակի իջած հասարակութիւն, փոշիացած միջազգային հեղինակութիւն: Սրանք լուրջ գործօններ են, որոնք առաւելագոյնս թուլացրել են Իսրայէլին, խիստ սահմանափակելով առկայ մարտահրաւէրին համաչափ ու համարժէք արձագանգելու նրա հնարաւորութիւնները:*

*Հաշւի առնելով վերը նշւած հանգամանքները, ակնյայտ է, որ առկայ պայմաններում Իրանի համար ռազմավարական համբերութիւնն ու կոշտ պատասխանը ոչ միայն չեն հակադրւում միմեանց, այլեւ՝ փոխլրացնող են եւ գործում են սինխրոն՝ միեւնոյն ուղղութեամբ:*

*Իրանի պատասխան հարւածը լինելու է: Դա միանշանակ է: Սակայն կարեւոր է, որ այն լինի չափազանց հաշւարկւած, ճիշտ ժամանակին եւ տարածաշրջանային իրադարձութիւնների ու զարգացումների տրամաբանութեան սահմաններում, որ առաւելագոյնը նպաստի Իսրայէլի խոցելիութեան մակարդակի բարձրացմանն ու «Դիմադրութեան առանցք»-ի դիրքերի ամրապնդմանը: Դրա ձեւի եւ բնոյթի մասին խօսակցութիւնները*

**(Շար. 8-րդ էջում)**




Դոկտ. Վելայաթի.

# «ԱՄՆ-ն եւ ՆԱՏՕ-ն ցանկանում են միջամտել տարածաշրջանի գործերին»

*«ԱԼԻՔ» - Վերջին օրերին Եւրոմիութիւնը եւ ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ի շրջանակներում հանդիպեցին Բրիւսէլում եւ ընդունեցին Հարաւային Կովկասի տարածաշրջան ներխուժման եւ անօրինական միջամտութեան նոր ծրագիր պատրաստելու նոր բանաձեւ եւ ուղղակիօրէն յայտարարեցին, որ ցանկանում են միջամտել աշխարհի այս շատ զգայուն տարածաշրջանում, իբր, նպատակ ունենալով նպաստել խաղաղութեանը: Այս մասին յայտարարել է Իսլ. յեղափոխութեան առաջնորդի միջազգային հարցերով խորհրդական դոկտ. Ալի Աքբար Վելայաթին՝ Al-Mayadeen հեռուստաալիքին տուած հարցազրոյցում:*

*Նա նշել է, որ «Նման գործողութիւնները ցոյց են տալիս, որ այս տխրահռչակ խմբաւորումը այլ նպատակ չունի, քան լարւածութիւն ստեղծել աշխարհի կարեւոր մասերում եւ ռազմական ներկայութեան պատրւակ որոնել՝ այս տարածաշրջանի երկրների անվըտանգութիւնն ու անկախութիւնը ոչնչացնելու գնով»:*

*Դոկտ. Վելայաթին նշել է. «Հարաւային Կովկասի տարածաշրջանի զգայունութիւնը ոչ մէկի համար գաղտնիք չէ, եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան փառաւոր պատմութիւնը ցոյց է տալիս, որ դարեր շարունակ մեր երկիրը միշտ եղել է կարեւոր յենասիւն այս տարածաշրջանում անվտանգութեան եւ խաղաղութեան պահպանման գործում: Հաշւի առնելով տարածաշրջանի երկրների իրաւունքներն ու զգայունութիւնը»:*

*Իսլ. յեղափոխութեան առաջնորդի միջազգային հարցերով խորհրդականն ասել է. «Հարաւային Կովկասը Իրանի անվտանգութեան գօտու կարեւոր մասն է, որը միշտ պաշտպանելու է այս տարածաշրջանի բոլոր երկրների անվըտանգութիւնը, անկախութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը, իսկ Բրիւսէլում Եւրոմիութեան, ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի վերջին որոշումը ոչ մի դէպքում չի իրականացւի»:*

## Թուրքիան անցել է «կապոյտ ահաբեկչութեան» իրականացնելով ջրային յանցագործութիւն՝ Արաքսը, Եփրատը եւ Տիգրիսը փակելով հարեւանների վրայ

*«ԱԼԻՔ» - Համաձայն նոր ուսումնասիրութիւնների Թուրքիայի ջրային նախագծերը Իրանի հիւսիս-արեւմուտքի շրջաններին կանգնեցնելու է ցամաքեցման վտանգի առաջ, ինչով շրջակայ միջավայրին հասցւող անփոխարինելի փասների կողքին, այն ուղիղ իմաստով թիրախաւորել է երկրի պարէնային անվտանգութեանը:*

*Թուրքիայի ջրամբարակառուցման նախագծերը կլանելու են ընդհանուր Արաքս գետի ջրառի 83%-ը: Նոյն կապակցութեամբ «Խորասան» օրաթերթին տուած հարցազրոյցում հետազօտութեան հեղինակ դոկտ. Հօջաթ Միանաբադին նշել է, որ Արաքսի եւ ակունքների վրայ կառուցւող ջրային նախագծերի ուսումնասիրութիւնների արդիւնքները ցոյց են տալիս, որ կառուցւող ամբարտակների գործարկումով Թուրքիան կը կարողանայ վերահսկել անդրսահմանային այս ջրբաժանի 3 միլիարդ 743 միլիոն խորանարդ մետր ջրային պաշարների առիւծի բաժինը:*



دکتر احمد کاظمی

@Dr_AhmadKazemi

تفاوت پروژه سدسازی های ترکیه روی رودخانه مشترک ارس که با عنوان «داپ» شناخته می شود، با سایر پروژه های سد سازی این است که ترکیه داپ را به صورت محرمانه و بدون انتشار اطلاعات و با نقض فاحش قواعد حقوق بین الملل و حقوق بشر زیست محیطی انجام می دهد.

لینک مصاحبه:

ahmadkazemi.com/?p=7893

Translate post

اجتماعی ۹

اردوغان در حال بلعیدن ارس

*«Սա այն դէպքում, երբ DSI-ի տւեալներով՝ Թուրքիայում Արաքսի աւազանի միջին պոտենցիալը կազմում է 4 միլիարդ 473 միլիոն խորանարդ մետր»,- յաւելել է փորձագէտը: Դոկտ. Միանաբադիի եւ նրա գործընկերների հետազօտութիւնից պարզ է դարձել, որ Թուրքիան ծրագրել է վերահսկել իր տարածքում եւ տարածքից դուրս հոսող Արաքս գետի աւազանի ջրբաժանի ներուժի աւելի քան 83%-ը: Խնդիր, որից խորապէս ազդւելու է գետով պայմանաւորւած կենսակերպն ու շրջակայ միջավայրը:*

*Միջազգային իրաւունքի փորձագէտ դոկտ. Ահմադ Քազեմին նոյնպէս «Խորասան»-ին յայտնել է, որ Թուրքիան*

**(Շար. 2-րդ էջում)**

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

*33 տարի առաջ այս օրը՝ 1991 թւականի ապրիլի 13-ին, Երեւանի Քաղխորհրդի որոշմամբ, Հանրապետութեան հրապարակից հեռացւեց Լենինի արձանը*








ՕՐՈՒԱՅ ԹԵՄԱ

# Հայաստանը ժողովրդավարութեան անկում է գրանցել

*Հայաստանն ազգային ժողովրդավարական կառավարման վարկանիշում անկում է գրանցել՝ 2.50-ից հասնելով 2.25-ի: Տարեկան զեկոյցը հրապարակել է Freedom House միջազգային հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը՝ «Nations in Transit 2024» խորագրով:*

*Համաձայն զեկոյցի՝ «Վարկանիշի անկումը պայմանաւորուած է գործադիրի կողմից իշխանութեան կոնսոլիդացման, կենտրոնական իշխանութիւնների կողմից ընդդիմադիր քաղաքապետերին պաշտօնանկ անելու եւ իշխող կուսակցութեան*

**(Շար. 7-րդ էջում)**




## Թուրքիան....

(Շար. 1-ին էջից)

*գաղտնի է պահում Արաքսի հետ կապուած իր ծրագրերը եւ Իրանի հետ համագործակցելու ցանկութիւն չունի:*

*Նրա կարծիքով՝ Թուրքիայի ջրային DAP եւ GAP նախագծերը, որոնք կառուցել կամ կառուցում են Տիգրիսի, Եփրատի եւ Արաքսի աւազանի վրայ իր տեսակի մէջ «կապոյտ ահաբեկչութիւն» է եւ շարունակութիւնն է Իրանի դէմ Օսմանեան յարձակումների:*

*«Այս համատեքստում, նոր ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այս երկիրը նախատեսում է օգտագործել Արաքս գետի ներուժի 83%-ը՝ DAP-ը աւարտին հասցնելուց յետոյ: Ուսումնասիրութիւնն իրականացրել է դիւանագիտութեան ոլորտի ականաւոր հետազօտող դոկտ. Հօջաթ Միանաբադին եւ արձանագրել, որ «Թուրքիան Արաքս գետի աւազանում 621 միլիոն խորանարդ մետր ընդհանուր տարողութեամբ ընդամէնը չորս ամբարտակ է շահագործել մինչեւ 2000 թուականը: Սակայն յաջորդ տասնամեակներում, այսինքն՝ մինչեւ 2020 թուականը, 846 մլն. խմ ընդհանուր հզօրութեամբ եւս հինգ պատուարների կառուցմամբ կարողացել է վերահսկել Արաքս գետի 1468 մլրդ. խմ ջուր»,- նշել է դոկտ. Քազեմին:*

*Յիշեցնենք, որ Թուրքիայի ջրային քաղաքականութիւնը բազմիցս քննադատութեան է ենթարկուել որոշ հարեւան երկրների, այդ թւում՝ Իրանի կողմից: Սակայն Անկարան անցած տարիներին առանց համաձայնեցնելու կամ նոյնիսկ տեղեկացնելու շարունակել է իրականացնել իր ամբարտակների կառուցման նախագծերը: GAP-ը շինարարական ծրագիր է, որի հիման վրայ թուրքական կառավարութիւնը նախատեսում է կառուցել աւելի քան 50 ամբարտակ եւ հիդրոէլեկտրակայան՝ Տիգրիս եւ Եփրատ գետերի վերին մասում, որոնք սկիզբ են առնում Կենտրոնական Անատոլիայի լեռներից եւ այդ երկրի հարաւ-արեւելքից հոսում դէպի Սիրիա եւ Իրաք: Այս պահին կառուցւում է 14 ամբարտակ Եփրատի վրայ, եւս 8-ը Տիգրիսի վրայ եւ ընդհանուր առմամբ 19 հիդրոէլեկտրակայան:*

*Ուսումնասիրութիւնների արդիւնքում պարզ է դարձել, որ միայն Տիգրիսի հատուածում այս նախագծերով կը կանխւի Տիգրիսի ջրային ռեսուրսների 56%-ի մուտքը Իրաք, ստեղծելով բնապահպանական լուրջ հետեւանքներ, ինչպէս նաեւ լարուածութիւն Թուրքիայի, Իրաքի եւ Իրանի միջեւ յարաբերութիւններում:*

*Իսկ DAP նախագծով Իրանի հիւսիս-արեւմուտքում գտնուող Արաքս գետի ակունքների վրայ մի քանի ամբարտակների կառուցմամբ, որոնցից մինչեւ 2000 թւականը Թուրքիան շահագործման էր յանձնել 621 միլիոն խորանարդ մետր ընդհանուր հզօրութեամբ չորս ամբարտակ, այսօր արդէն՝ երկու տասնամեակ անց կառուցապատուել են եւս հինգ ամբարտակներ՝ ընդհանուր հզօրութիւնը 846 մլն. խմ, որոնք արդէն իսկ կլանում են Արաքսից 1 մլրդ. 468 մլն. խմ ջուր: Արաքսի վրայ եւս 7 ամբարտակների կառուցման աշխատանքները շարունակւում են, իսկ եւս 7-ը կառուցւելու են յաջորդիւ, որոնց շահագործումից յետոյ Թուրքիան կլանելու է Արաքսի ջրային ներկայ տարողութեան 83%-ը:*

*Իր հարեւան երկրների անհրաժեշտ եւ արդիւնաւէտ դիւանագիտութեան բացակայութեան պայմաններում Թուրքիային յաջողուել է ձեւաւորել մեդիա քարոզչութեան ոլորտում գործիքակազմ, որոնք միջազգային հանրութեան վրայ ազդելու լծակների օգնութեամբ փորձում են համոզիչ երեւալով արդարացնել նախագծերի իրականացման անհրաժեշտութիւնը: «Խորասան» օրաթերթի շրջակայ միջավայրի հարցերով լրագրողն արձանագրել է, որ ապացոյցները խօսում են այն մասին, որ Անկարան մեծապէս յաջողել է այս հարցում՝ օգտագործելով ժամանակակից դիւանագիտական հնարաւորութիւնները:*

*Հետազօտութեան արդիւնքների համաձայն՝ Արաքսի միջսահմանային ջրբաժանում Թուրքիայի գործողութիւնները բացասաբար են անդրադառնում գետաջրի որակի ու ծաւալների վրայ: Հետազօտութեան հեղինակները հաստատել են նաեւ, որ խնդիրը խորապէս ազդելու է նաեւ «Մաքու» եւ «Արաս» ազատ առեւտրի գօտի կոչւող շրջանների վրայ, որոնք կարեւոր դեր ունեն երկրի տնտեսութեան մէջ: Տուժելու է նաեւ Դաշթէ Մողանը, որն ապահովում է Իրանի պարէնային անվտանգութեան զգալի տոկոսը:*

*Թուրքիան նախագծերն իրականացնում է գաղտնի կերպով՝ առանց տեղեկատւութիւն հրապարակելու: Պատճառն այն է, որ Անկարան շատ լաւ գիտի, որ Արաքս գետը միջազգային հուն է, եւ նրանց ցանկացած շահագործում որպէս գետի վերին հատուածում գտնուող երկիր պէտք է հիմնուած լինի միջազգային իրաւունքի գործող օրէնքների վրայ: Քազեմին յաւելել է, որ Արաքսը գետ է, ինչի պաշարներից Թուրքիայից բացի օգտւում են Իրանը, Ադրբեջանը, Հայաստանը եւ Նախիջեւանը: «Սակայն Թուրքիայի ջրային քաղաքականութիւնը վերջին տարիներին հիմնականում հիմնուած է միջազգային կանոնների խախտման վրայ: Մինչդեռ միջազգային օրէնքներն ընդգծում են, որ վերին հատուածի երկրները ընդհանուր ջրային ռեսուրսներ օգտագործելիս պէտք է հետեւեն 3 սկզբունքի. հաշւի առնել ռեսուրսների ողջամիտ եւ արդարացի օգտագործումը, ռեսուրսների ոչ վնասակար օգտագործումը եւ անվտանգային ու միջազգային համագործակցութեան սկզբունքը: Սակայն, ակնյայտ է, որ Թուրքիան խախտում է միջազգային իրաւունքի կանոնները՝ կառուցելով Արաքս գետի ռեսուրսները գերազանցող ամբարտակներ, ինչպիսին է Քարկուրթը: Այս հարցը կարելի է գնահատել մարդու իրաւանց եւ բնապահպանութեան միջազգային իրաւունքի եւ այլ խնդիրների տեսանկիւնից»,- նշել է միջազգային իրաւունքի հարցերով աւագ փորձագէտը:*

*Թերթը փորձագէտից հետաքրքրուել է թէ ինչպիսին է եղել Արաքսին յարող միւս երկրների արձագանգը՝ Թուրքիայի այս գործողութիւնների մասին, որին պատասխանելով փորձագէտը նկատել է տւել, որ Ադրբեջանի Հանրապետութիւնը Թուրքիայի հետ իր էթնիկական կապերի պատճառով այս հարցում յստակ դիրքորոշում չունի, իսկ Հայաստանը նոյնպէս շատ չի մտնում այս հարցի մէջ՝ ղարաբաղեան հակամարտութիւնում ունեցած կոնֆլիկտների պատճառով, չնայած այդ երկիրը մեզ նման ջրի սակաւութեան ճգնաժամ չունի: «Միեւնոյն ժամանակ, ակնկալւում է, որ այս մարտահրաւէրը պէտք է լուծել տարածաշրջանային ֆորումի տեսքով»,- նշել է դոկտ. Քազեմին միաժամանակ յիշեցնելով, որ անհրաժեշտ է, որ Իրանը հարցը բարձրացնի միջազգային ատեաններում բողոքի տեսքով, ինչպէս նաեւ մարդու իրաւունքների բնապահպանական խնդիրների տեսքով ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհրդում՝ օգտագործելով երկկողմ եւ տարածաշրջանային հնարաւորութիւնները՝ Թուրքիային ստիպելու համար համագործակցելու Արաքսի ոլորտում:*

# Հայաստանում պէտք է լինի համազգային շարժում



*Այսօր՝ ապրիլի 13-ին, Տաւուշի մարզի Ոսկեպար համայնքում «Տաւուշը՝ հանուն հայրենիքի» քաղաքացիական նախաձեռնութեան ներկայացուցիչները հաւաք են անելու: «Հաւաքւում ենք Ոսկեպարի գիւղամիջում, ասելու՝ տէր ենք մեր հայրենիքին ու պետութեանը: Մենք թշնամուն զիջելու հող չունենք: Արիւնով ազատագրուած տարածքները ստորագրութեամբ չպիտի յանձնուեն»,- յայտարարել է օրերս ձեւաւորուած նախաձեռնութեան խորհուրդը, որում ընդգրկուած է նաեւ ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, ծնունդով տաւուշցի Գառնիկ Դանիէլեանը: «Հրապարակ»-ը նրանից հետաքրքրուել է՝ ինչո՞ւ են հաւաքն անցկացնում Տաւուշում, մտածում են, որ Տաւուշից տարածքներն Ադրբեջանին յանձնելու խնդիրը լոկալ՝ տեղական խնդիր է, եւ դրա դէմ պէտք է պայքարեն միայն տաւուշցինե՞րը:*

*– Ապրիլի 13-ին «Տաւուշը՝ յանուն հայրենիքի» նախաձեռնութիւնը հաւաք է կազմակերպել Տաւուշում՝ ինչո՞ւ Տաւուշում, եթէ Երեւանի կենտրոնում նստածներն են որոշել յանձնել Տաւուշի տարածքները:*

*– Ես այդ հասարակական նախաձեռնութեան անդամն եմ, եւ մենք, այո', նպատակ ունենք թոյլ չտալ կենսական զիջումներ: Այո, չնայած Տաւուշից են ուզում սկսել, բայց ամբողջ Հայաստանի խնդիրն է: Թէ ինչու Տաւուշից, որովհետեւ մեր գործունէութեան հենքը Տաւուշն է, մենք փորձում ենք Տաւուշում համախմբում իրականացնել, որովհետեւ շատ կարեւոր է, որ ոչ միայն այդ մի քանի, կոնկրետ՝ չորս գիւղերը, որոնց հետ խնդիր կայ, այլեւ միւսները եւս գիտակցեն, որ սա բոլորի խնդիրն է: Ոսկեպարի, Բաղանիսի, այլ բնակավայրերի մարդիկ պիտի հասկանան, որ դա չորս գիւղի խնդիրը չէ, մենք փորձելու ենք մարդկանց դա հասկացնել, որովհետեւ, հաւատացէք, այդ գիտակցումը չկայ, որոշակի չափով հասկանում են խնդիրը՝ որ գործընթացը ճիշտ տեղ չի գնում, բայց խորութեամբ չեն հասկանում: Մի քանի գիւղում են հասկանում, դրա համար էլ ամէն օր ոտքի են կանգնած, մնացած գիւղերում՝ մի տեղ կայ, մի տեղ չկայ, որոշներն իրենց կոմֆորտի զոնայում են: Օրինակ, նոյն Ոսկեպարի տրամադրուածութիւնն անգամ տարբերւում է Կիրանցում տիրող տրամադրուածութիւններից: Այս մթնոլորտը պիտի փոխենք:*

*– Մարդիկ չորս տարի է՝ տեսնում են, թէ ինչ է կատարւում, վերջին մէկ ամսում էլ բազմաթիւ յայտարարութիւններ են հնչել, որ այդ տարածքների յանձնման հետեւանքը լինելու է այն, որ Տաւուշն ամբողջութեամբ յայտնուելու է թշնամու վերահսկողութեան տակ, եթէ այսքանից յետոյ էլ չեն գիտակցում, ինչպէ՞ս էք պատրաստւում հասկացնել:*

*– Օրինակ՝ անձամբ ես առաջին մարդն եմ եղել, որ գնացել նկարել եմ, քարտէզներով եմ բացատրել, թէ ինչ արհաւիրք է լինելու, կոմունիկացիաներն են յանձնելու: Այդ ժամանակ շատ մարդ չէր հաւատում, բայց հիմա կարող եմ ասել, որ իրավիճակն աւելի փոխուել է: Նախ՝ այդ ինչպէ՞ս են որոշել, որ դրանք ադրբեջանական տարածք են, եթէ սահմանազատում-սահմանագծում չի արւում, չկայ համաձայնութիւն: Ո՞վ է ասում, որ դրանք ադրբեջանական են: Թշնամին մտել է, մեր սուվերեն տարածքի 340 կիլոմետրն օկուպացրել է, 31 բնակավայր իր վերահսկողութեան տակ է, Արծւաշէնը՝ նոյնպէս, էդ մարդը դրանք վերադարձնելու փոխարէն որոշել է միակողմանի զիջում անել: Նախ պիտի քարտէզները ճշտել, ու սկզբունքները ճշտելուց յետոյ էլ փոխադարձ պայմանաւորուածութիւններ ձեռք բերել, ասենք՝ ճանապարհն անցնում է, մենք ինչո՞ւ պիտի տանք, սա մի օրուայ գործընթաց չէ, սահմանազատումը տարիների գործընթաց է, մենք տեսնում ենք, որ Հայաստան-Վրաստան գործընթացն արդէն 30 տարի է՝ գնում է: Հիմա սա պիտի բացատրենք ժողովրդին:*

*Մեր նախաձեռնութիւնը վերկուսակցական մարմին է, մեր թիմից միայն ես եմ խորհրդի անդամ, ընտրուել եմ նախաձեռնութեան կողմից՝ որպէս տաւուշցի, ու պէտք է շեշտեմ, որ մեր խնդիրն այն է, որ չկուսակցականացւի այդ նախաձեռնութիւնը: Հայաստանում պիտի շարժում սկսւի, որը կը ներառի ոչ միայն կուսակցութիւններին, այլ՝ տարբեր նախաձեռնութիւնների, Սփիւռքի մեր գործիչներին, անհատներին: Այսինքն, պէտք է ձեւաւորւի համազգային շարժում՝ համահայկական օրակարգով:*

*– Այսինքն՝ ճիշտ հասկացա՞յ, որ ընդամէնը իրազեկման ակցիա էք իրականացնելու, մարդկանց տեղեկացնելու էք, թէ ինչ է իրենց սպասւում: Ասենք՝ որոշե՞լ էք յաջորդ քայլերը:*

*– Մենք յստակ պահանջներ ենք դնում եւ թոյլ չենք տալու կենսական զիջումների գնալ: Իհարկէ, մեզնից կախուածը: Մենք ամենազօր Ջինը չենք, բայց ամբողջ հոգով-սրտով կանգնած ենք շարժման ակունքներում եւ դէմ ենք, ժողովուրդն էլ իրաւունք ունի պայքարելու, ո՞ւր կը տանի դա, ոչ մէկը չի կարող ասել, բայց մենք անկեղծ լծուած ենք դրան: Ինչքան մեզ շատ մարդ հաւատայ, ինչքան մեր ուժերը շատ լինեն, այնքան մենք կարող ենք մեր առջեւ դրուած խնդիրները կատարել, դրա համար ուզում ենք ստանալ ժողովրդի վստահութեան քուէն:*



## Կարէն Քոչարեան.

# «Այս իշխանութիւնները, փաստացի, չկարողացան քանդել միայն եկեղեցին»

«Առաւօտ» օրաթերթը զրուցել է քաղտեխնոլոգ Կարէն Քոչարեանի հետ

**- Վերջին սոցհարցումների համաձայն՝ Նիկոլ Փաշինեանի հակառէյտինգը 75 տոկոս է: Այս ֆոնին Հայաստանի ներքաղաքական դաշտում բաւական հետաքրքիր պատկեր է ստեղծւում. ընդդիմադիր ուժերն անգամ այս պարագայում չեն կարողանում համախմբել եւ համախմբել հասարակութեանը: Ինչո՞ւ: Սրա պատճառները որո՞նք են, ըստ Ձեզ:**

-Ես կարծում եմ, այնուամենայնիւ, հիմնական պատճառը՝ դա մի քանի անգամ ձախողուած պայքարն է, որից յետոյ ուժերի վերականգնումը, բնականաբար, ժամանակ է պահանջում: Բայց խնդիրը միայն համախմբումը չէ: Չնայած դա անհրաժեշտ, առաջնային պայման է, բայց ոչ բաւարար: Առաջնային պէտք է համախմբուեն բոլոր այն ուժերը, որոնք հակաՆիկոլ են՝ անկախ նրանից՝ նրանք արեւմտամէ՞տ են, ռուսամէ՞տ են, հայամէ՞տ են, վրացամէ՞տ են, իրանամէ՞տ են, թէ՝ ի՞նչ են: Պէտք է համախմբուեն, եթէ նրանց պայքարն ազնիւ է: Իսկ բաւարար պայմանն, ըստ իս, պէտք է լինի՝ Նիկոլի ֆէյք-խաղաղութեան ծրագրին այլընտրանքային ծրագիր ներկայացնելը:

Հասարակութեանը համախմբելու համար անհրաժեշտ են կոնկրետ ծրագրեր, կոնկրետ քայլերով, կոնկրետ ճանապարհային քարտէզով, այդ թւում նաեւ՝ կոնկրետ դէմքերով: Այսպէս կոչուած՝ ստուերային կառավարութեան կազմով, սեփական թիմով:

**- 2020-ից յետոյ, ընդդիմադիր բոլոր ձախողուած շարժումներից յետոյ խօսւում է համախմբման անհրաժեշտութեան եւ այլընտրանքային ծրագիր ներկայացնելու մասին:**

- Այլընտրանքային ծրագրի մասին նոր են սկսել խօսել:

**- Դատելով նրանից, որ համախմբում չի կայանում, ոչ էլ այլընտրանքային ծրագիրն է միս ու արիւն ստանում, կարելի՞ է ենթադրել, որ պայմանական ասած՝ հակաՆիկոլ, քաղաքական ուժերն այդքան էլ անկեղծ չեն իրենց մղումներում եւ իրականում, նաեւ այլընտրանքային ծրագիր չունեն:**

- Գիտէք՝ սուրբ տեղը դատարկ չի մնում: Այդ ժամանակը կարող է ձգուել, բայց դա անվերջ չի կարող լինել. չներկայացնեն իրենք՝ կներկայացնեն ուրիշները, չկարողանան համախմբել, կը համախմբեն ուրիշները:

**- Բայց քաղաքական դաշտում վակուումը տեւական ժամանակ է. «նախկին» կոչւող ուժերին հասարակութիւնը չի ընդունում, ներկաներին՝ առաւել եւս, բայց նոր ուժեր էլ չեն ձեւաւորւում կամ ձեւաւորւողները շատ փոքր են, ոչ ազդեցիկ, իրենց շուրջ հանրային համախմբում տեղի չի ունենում:**

- Ես իմ խօսքը հէնց դրանից էլ սկսեցի՝ դա անվերջ չի կարող տեւել: Ամէն ինչ իր ժամկէտն ունի:

**- Մենք ունե՞նք այդ ժամանակը: Մենք ասելով՝ նկատի ունեմ Հայաստանի Հանրապետութիւնը եւ նրա գլխին կախուած մարտահրաւէրները:**

- Ես մի բան գիտեմ՝ անելանելի իրավիճակներ չկան: Կան վատ կատարողներ: Ժամանակ միշտ էլ կայ:

**- Առաջին, երկրորդ, երրորդ նախագահները 2020 թւականի պատերազմից յետոյ ինչ-որ փորձեր արեցին՝ միմեանց ներելու, մէկ հարթակում կանգնելու, բայց դրանք ձախողուեցին ու արդիւնքում բաց մնաց կամ լղոզուեց նաեւ քաղաքական պատասխանատուութեան հարցը: Չէ՞ք կարծում, որ անկախ ամէն ինչից՝ այդ թւում նաեւ սեփական ամբիցիաներից ու տարաձայնութիւններից, այդ երեք դերակատարները պէտք է վերցնեն քաղաքական պատասխանատուութիւնը: Աւելի մեծ բան, քան պետութեան կորուստն է՝ չկայ:**

– Ոչ թէ կարծում եմ, այլ վստահ եմ, որ այդպէս պէտք է լինի: Կը լինի՞, թէ՞ ոչ, չեմ կարող ասել: Աւելին, նրանց պէտք է միանայ նաեւ Կաթողիկոսը: Ինչքան էլ առաջին հայեացքից տարօրինակ թւայ, այս իշխանութիւնները, փաստացի, չկարողացան քանդել միայն եկեղեցին: Եկեղեցին այսօր միակ կառոյցն է, որն ունի համակարգային կառուցուածք, համակարգային մօտեցում եւ այս իշխանութիւնների կողմից բոլոր յարձակումները պատւով պահել է, մնացել է իր դիրքերում՝ չզիջելով ոչ մի քայլ:

**-Լիդերութիւնը Կաթողիկո՞սը պէտք է ստանձնի:**

-Ես ասացի՝ Կաթողիկոսը պէտք է միանայ երեք նախագահներին, որովհետեւ եկեղեցին, այնուհանդերձ, քաղաքական ենթակառուցուածք չէ:

**Զրոյցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**

## Արմէն Պետրոսեան.

# «Արեւմուտքի կամ այլ դերակատարների հետ համագործակցութիւնը չի կարող այլընտրանք լինել Իրանի հետ համագործակցութեան»



Բրիւսէլում կայացած հանդիպումը համագործակցային նոր ձեւաչափի մեկնարկն էր, որը բնականաբար բաւականաչափ կարեւոր է Հայաստանի առջեւ ծառացած մարտահրաւէրների դիմակայման եւ նոր հնարաւորութիւնների ստեղծման ուղղութեամբ յատկապէս քաղաքական, տնտեսական, հումանիտար եւ էներգետիկ ոլորտներում:

Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յայտնեց քաղաքագէտ Արմէն Պետրոսեանն անդրադառնալով Բրիւսէլում կայացած եռակողմ ՀՀ-ԵՄ-ԱՄՆ հանդիպմանը:

Անդրադառնալով տարածաշրջանի երկրների վրայ բրիւսէլեան ձեւաչափի ազդեցութեանը, քաղաքագէտը մասնաւորապէս նշեց, որ Իրանը չափազանց կարեւոր երկիր է մեզ համար, եւ անգնահատելի տեղ ունի: Հետեւաբար անգամ Արեւմուտքի կամ այլ դերակատարների համագործակցութիւնները չեն կարող այլընտրանք լինել Իրանի հետ համագործակցութեան եւ յարաբերութիւններին»,- շեշտեց նա:

«Նոր ձեւաչափն աւելի է թուլացնում Հայաստանի կաշկանդուածութիւնը եւ ստեղծում է նոր հնարաւորութիւններ: Հանդիպումը կարելի էր գնահատել, որպէս ակնկալւող իրատեսական սպասումների նուազագոյն մակարդակի իրականացում է չնայած նրան, որ նոր պայմանաւորուածութիւններ են ձեռք բերուել տնտեսական, ֆինանսական աջակցութեան ոլորտներում սակայն կարելի էր աւելի ակնկալիքներ ունենալ եւ չպէտք է սահմանափակուել ձեռք բերածով»,- նշեց նա:

Ըստ Պետրոսեանի՝ կարելի էր ակընկալել աւելի լայն արտօնութիւններ առեւտրի ուղղութեամբ եւ ներդրումներ ունենալ փախստականների եւ բռնի տեղահանուած անձանց աջակցութեան տրամադրման ուղղութեամբ, եւ այդ ոլորտներում եւս կարող էին լինել աւելի մեծ ծրագրեր:

«Աւելի լայն ֆինանսական, տընտեսական, էներգետիկ ոլորտներում աջակցութիւններ էր ակնկալւում աւելի շօշափելի ծրագրերի իրականացման ուղղութեամբ որովհետեւ այս պահին համագործակցութեան եռակողմ ձեւաչափը ՀՀ-ԵՄ-ԱՄՆ փոխշահաւէտ է ՀՀ-ի համար եւ իւրաքանչիւրը լուծում է իր առջեւ դրուած խնդիրները: Հայաստանի մասով մեր տնտեսական, քաղաքական, անվտանգային դիմակայնութիւնը ընդլայնելու մակարդակում»,- նշեց նա:

Անդրադառնալով միւս կողմերի դիրքորոշումներին, Պետրոսեանը նշեց, որ այս տարածաշրջանում ի հակակշիռ իրենց հակառակորդների Արեւմուտքը եւ ԱՄՆ-ն փորձելու են ամրապնդել իրենց իրավիճակը փոխադարձ համադրելի շահերի հանգամանքը հաշուի առնելով:

Հետեւաբար նրա խօսքով՝ պէտք է փորձել զգոյշ լինել, ճիշտ, գրագէտ ու հաշուարկուած քայլերով գնալ առաջ եւ պահանջել գործընկերներից առաւելագոյնը:

Այս հանդիման ձեւաչափի հետ կապուած, Պետրոսեանը համոզմունք յայտնեց, որ յաճախ կարելի էր հանդիպել անիրատեսական եւ ուռճացած ակնկալիքների, այն յատկապէս ձեւաւորւում էր հայ հասարակութեան այն հատուածի կողմից, որոնք Հայաստանի ապագան կապում էին միայն Արեւմուտքի հետ եւ շտապեցնում էին ՀՀ կառավարութեանն Արեւմուտքի հետ համագործակցութեան հարցում այդ ուռճացուած ակընկալիքների ձեռքբերման համար, որը վերաբերում էր անվտանգութեան ոլորտին, յանուն որոշակի անվտանգային մեխանիզմների ձեւաւորման կամ երաշխիքների տրամադրման համար ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի կողմից, որը բնականաբար տեղի չունեցաւ:

«Այդ ակնկալիքները նաեւ մինչեւ բուն հանդիպումը որոշակի հակազդեցութիւն էին ստեղծել՝ ե՛ւ Ադրբեջանի, ե՛ւ ՌԴ-ի, ե՛ւ Թուրքիայի կողմից. բնականաբար իւրաքանչիւրն իր շահերի տիրոյթում անդրադառնում էր հանդիպմանը»,- նշեց նա:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին ապա այդ երկիրը բրիւսէլեան հարթակը տեսնում է, որպէս ՀՀ-ի հնարաւորութիւնների ընդլայնման սպառնալիք Ռուսաստանի եւ Արեւմուտքի ազդեցութեան ընդլայնում մասնաւորապէս Թուրքիայի կողմից, որի տարբեր պաշտօնեաներ դէմ են դուրս գալիս մեր տարածաշրջանում Արեւմուտքի դիրքերի ամրապնդման փորձերին:

Քաղաքագէտը փաստեց, որ այդ համագործակցութիւնը նախեւառաջ տեղի ունեցաւ աշխարհաքաղաքական դիմակայութեան եւ տարածաշրջանային նոր իրողութիւնների համատեքստում եւ եռակողմ համագործակցութիւնն անխուսափելիօրէն կունենար հակառակորդներ ինչպէս տարածաշրջանում այնպէս էլ տարածաշրջանից դուրս, այդպէս էլ եղաւ, յատկապէս Ադրբեջանի կողմից, որը փորձում է կանխել եւ թոյլ չտալ Հայաստանի հնարաւորութիւնների ընդլայնման ցանկացած փորձ եւ խախտուած անվտանգային եւ ուժային հաւասարակշռութիւնը վերականգնելու ուղղութեամբ:

«Ռուսաստանի եւ Թուրքիայի կողմից եւս ականատես եղանք կտրուկ հակազդեցութիւնների»,- յիշեցրեց քաղաքագէտը:

Անդրադառնալով Իրանի դիրքորոշմանը բրիւսէլեան ձեւաչափին Արմէն Պետրոսեանը նշեց, որ Իրանը պաշտօնական մակարդակում կըտրուկ հակազդեցութիւն չցուցաբերեց, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը յատկապէս փորձագիտական դաշտը բոլոր հնարաւոր մակարդակներով փորձում էր բացատրել եւ ներկայացնել Հայաստանի նպատակները այդ ձեւաչափի գործարկման, որն է ՀՀ-ի առջեւ եղած մարտահրաւէրները չէզոքացնել եւ այն միտուած չէ որեւէ երրորդ կողմի դէմ:

Հարցին թէ ինչու բրիւսէլեան ձեւաչափը արժանացաւ ՌԴ-ի կտրուկ հակազդեցութեանը, Պետրոսեանը նշեց, ակնյայտ է, որ Ռուսաստանի դիրքորոշումը պէտք է զգայուն լինէր, որովհետեւ մենք փաստացի ականատեսն ենք լինում տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացմանն ու տարածաշրջանի երկրների հետ համագործակցութեան

(Շար. 6-րդ էջում)

## Վաhէ Յովհաննիսեան.

# «Լայն հասարակութիւնը՝ ընդդէմ հրէշի վերածւող իշխանութեան»



***Մեր պետութիւնը մեծ դրէյֆի մէջ է, պատկերացրէք՝ բաց ծովում ինքն իրենից անկախ գնում է: «Ֆէյսբուք»-եան էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահէ Յովհաննիսեանը.***

Լայն հասարակութիւնը՝ ընդդէմ հրէշի վերածւող իշխանութեան:

Մեր պետութիւնը մեծ դրէյֆի մէջ է, պատկերացրէք՝ բաց ծովում ինքն իրենից անկախ գնում է: Ոչ մի խարիսխ չունի, ոչ մի ափ չի երեւում, ոչ մի փըրկարար չի գալիս օգնութեան:

Իշխանութիւնը վերածւում է հրէշի. գիտի, որ տանում է աղէտի ու սառնասրտօրէն խաբում է ժողովրդին: Արտգործնախարարն ասում է. «... Մենք ընդհանուր լեզու ենք գտել Ադրբեջանի հետ շատ հարցերի շուրջ, բայց երկու կարեւոր կէտում չենք կարողանում համաձայնութեան գալ՝ տարածքային ամբողջականութեան ճանաչում եւ հաղորդակցութիւնների բացում»:

Բա էլ ինչի՞ շուրջ էք համաձայնութեան եկել. Արցախը Ադրբեջան համարելո՞ւ, գերիներին Բաքւում թողնելո՞ւ, Տաւուշի գիւղերը յանձնելո՞ւ, Բաքւի COP 29-ի՞:

Մենք ունենք անտէր թողնուած ժողովուրդ, անտէր թողնուած ընտրազանգուածներ: 2021-ի ընտրազանգուածներն անտէր են թողնուել: 680 հազարի լիդերը ցինիկօրէն խաբել է ու տարել աղէտի, միւս երկուսի առաջին համարները՝ Քոչարեան ու Վանեցեան, դուրս են եկել քաղաքական հրապարակային պրոցեսներից եւ նուազագոյնը երկու տարի է՝ չեն շփւում սեփական ընտրազանգուածների հետ: Վերջին երկուսի որոշումներին կարելի է գուցէ ըմբռնումով մօտենալ, որովհետեւ դրանք անհատական մակարդակում կայացուած որոշումներ են, մնացածը պատմութիւնը կը գնահատի:

Պարզապէս արձանագրենք փաստը. բոլոր հին ընտրազանգուածները մնացել են առանց առաջնորդութեան, այդ թւում ամենամեծը՝ չքուէարկածները: Բոլոր հասարակութիւններն ուզում են ունենալ լիդերներ, վերնախաւեր, հայրեր՝ կախուած հասարակութեան քաղաքակրթային մակարդակից, ուզում են ունենալ մէկին, որին կը վստահեն, կը պատուիրակեն՝ իրենց փոխարէն մտածելու, իրենց ուղղորդելու, իրենց անվտանգ ու յարաբերական արդար ձեւով կառավարելու:

Հիմա հայ հասարակութիւնը մնացել է անտէր՝ մոլորուած, անորոշ, խեղճացած. ոչ մի առաջնորդութիւն, ոչ մի վերնախաւ, ոչ մի լուրջ մտաւորական շերտ:

***Նոր ընտրազանգուածները՝***

Տեսէք ինչ է ստացւում. մեր պետական նաւը բաց ծովում դրէյֆի մէջ է, բայց նաւի ներսում նոյնպէս քաոտիկ պրոցես է, ոչ մի ռացիոնալ ջանք ու գործողութիւն չկայ:

Սրա հետեւանքով ընտրազանգուածների բովանդակութիւնը եւ կառուցուածքը փոխուել է: Հայաստանում այսօր, մեծ հաշւով, կայ երկու ընտրազանգուած.

1. Նրանք, ովքեր հաւատում են, որ կարելի է շտկել-փրկել վիճակը

2. Նրանք, ովքեր չեն հաւատում

Ո՞րն է այն սուպերիդեան, որը կարող է միաւորել հասարակութեանը՝ ինքն իրեն եւ պետութիւնը փրկելու համար:

Այդ գաղափարը կարող է լինել պետութեան դրէյֆը կանգնեցնելը: Բոլոր տարաձայնութիւններով, բոլոր հակասութիւններով ու նախասիրութիւններով հանդերձ՝ դրէյֆը կանգնեցնելու գաղափարը կարող է միաւորել բոլորին, որպէսզի բոլորով չկործանուենք: Այս գաղափարին կարելի է տալ առարկայական տեսք՝ քայլերի ճանապարհային քարտէզ ինչպէ՛ս գնալ ներքին հաշտեցման, ներընտրազանգուածային հաշտեցման եւ ինչպէ՛ս գնալ միասնական նոր իշխանութեան ձեւաւորմանը, որտեղ բոլոր ունակ մարդիկ աշխատանքի դաշտ կունենան:

***Ճիշտ հասկանալ ներսի կոնֆլիկտը՝***

Ընտրազանգուածները մարդկային դէմք ունեն՝ բոլոր տարբերութիւններով հանդերձ, եւ կայ իշխանական մի նեղ խումբ, որը միֆական հրէշի կերպար է արդէն ստանում: Մեր ներսի կոնֆլիկտը հիմա սա է՝ մարդկային դէմքով հասարակութեան (բոլոր յատկանիշերով ու դեֆեկտներով հանդերձ) եւ միֆական հրէշի կերպարով իշխանութեան: Թէ ո՞վ կը յաղթի, դրանից կախուած է ինչպէս կաւարտուի դրէյֆը: Սա իսկապէս լաւ հէնք է զանգուածայինինքնափրկութեան պրոցես գեներացնելու:

Վերջին օրերին պետութեան դրէյֆն էականօրէն արագացաւ: Մենք ականատես եղանք անհաւանական թւացող սցենարի. Արեւմուտքը (ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը) Հայաստանի հետ շփւում է Ադրբեջանի եւ Թուրքիայի թոյլտուութիւնը ստանալուց յետոյ, եւ շփման ծաւալը շտկւում է՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի թոյլտուութեան ծաւալից ելնելով:

Ռուսաստանը մեզ բաց տեքստով ասում է՝ քո շահերը պաշտպանելու փոխարէն, Հայաստան, դու ընտրում

(Շար. 6-րդ էջում)




Համազգայինի
Հայագիտական
Բարձրագոյն
Հիմնարկ



# «Հայկական մարդուժի պատրաստութեան տարի»-ն ու «Համազգային»-ը

Հայ ազգին պարտադրուած մռայլ ու գորշ իրավիճակին ի տես՝ Հայաստանի, Արցախի թէ աշխարհացրիւ սփիւռքի մէջ, Արամ Ա Վեհափառ կաթողիկոսը 2022-ը, ապա 2023 տարիները հռչակեց «Սփիւռքի տարի»՝ Ա եւ Բ համապատասխան խորքով, որուն ամբողջական արտայայտութիւնը ցոլաց հռչակագիրին մէջ, եւ որուն յաջորդեցին գործնական աշխատանքներ:

Մեր այս գիրով պիտի չանդրադառնանք անշուշտ վերոյիշեալ գործնական աշխատանքներուն ու անոնցմէ ստացուած արդիւնքներուն…

Սակայն պիտի ձգտիմ անդրադառնալ 2024 տարին «Մարդուժի պատրաստութեան տարի», այլ խօսքով՝ «Հայկական մարդուժի պատրաստութեան տարի» հռչակումին, որ տրամաբանական շարունակութիւնն է «Սփիւռքի տարի»-ներուն, սակայն՝ «Համազգային» հայ կրթական եւ մշակութեան միութեան պրիսմակէն դիտուած:

Ուրեմն, սկսիմ «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան մարդուժի պատրաստութեան 95-ամեայ երթէն:

«Համազգային»-ի մասին գրել՝ անշուշտ չի նշանակեր թերագնահատել կամ ստորագնահատել ու անտեսել բազմաթիւ կառոյցներու ի գործ դրած ճիգը, տարած ու տարւող աշխատանքը՝ մարդուժի պատրաստութեան սուրբ գործին ու առաքելութեան ճամբուն վրայ: 95-ամեայ «Համազգային»-ն ալ նուիրեալ տիտան մըն է այդ յանձնառութեան:

Հայկական մարդուժի պատրաստութեան նպատակով 1928-ին հիմնուած «Համազգային»-ին առաջին ուստումը, գործը եղած է նախ հիմնել այն հնոցը, դարբնոցը, որ կոչուեցաւ Հայ ճեմարան, ապա վերանուանուեցաւ «Նշան Փալանճեան» ճեմարան, ուրկէ անցնող տասնամեակներուն դուրս եկան հարիւրաւոր շրջանաւարտներ, որոնք լոյս սփռած են ոչ միայն լիբանանահայութեան կեանքին, այլ նաեւ Սփիւռքի տարածքին, հայ հասարակութեան՝ որպէս իսկական հայեր, տաղանդաւոր ազգայիններ:

«Ն. Փալանճեան» ճեմարանի հիմնադրութեան յաջորդող տարիներուն հիմնադրուեցաւ «Համազգային»-ի տպարան-հրատարակչատունը, ապա նաեւ գրախանութը՝ Զոքաք Պլաթի իր տարածքին մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին բերումով ու այլ իւրայատուկ պատճառներով «Ն. Փալանճեան» ճեմարանը «փոխարինուեցաւ», «Մելանքթոն» եւ «Հայկ Արսլանեան» ճեմարանով, որ ապա ունեցաւ իր կրկնօրինակը Մարսէյլի մէջ՝ «Համազգային»-ի ճեմարանը, որ այսօր կեանքի պահանջով ծաւալելու ու ուռճանալու ընթացքին մէջ է. ապա նաեւ ունեցաւ իր երրորդ նմանակը Աւստրալիոյ Սիդնիի մէջ՝ «Արշակ եւ Սոֆի Գոլթըն» ճեմարանը:

Իր հիմնադրութեան թուականէն ոչ շատ ուշ, իր մշակութային գործունէութեան ճամբուն վրայ, «Համազգային»-ը Լիբանանի մէջ ունեցաւ իր թատերախումբը՝ «Համազգային»-ի հիմնադիրներէն Գասպար Իփէկեանի ղեկավարութեամբ ու բեմադրութեամբ եւ իր ականաւոր դերակատարներով (օրինակ՝ Զեփիւռ Շանթ…): Աւելի ուշ ունեցաւ իր երգչախումբը «Գուսան» անունով, որ շարունակութիւնը հանդիսացաւ Կոմիտաս վարդապետին ու Բարսեղ Կանաչեանի «Գուսան» երգչախումբին՝ անմար պահելու համար անոնց անուններն ու շարունակելու սկսուած գործը:

Թատերական թէ երաժշտական գործունէութեան ճամբուն վրայ անցնող տասնամեակներուն մեծ եղած է «Համազգային»-ի կուտակած ժառանգը, որ հետզհետէ դուրս եկած է Լիբանանի նեղ սահմաններէն ու տարածուած՝ աշխարհացրիւ Սփիւռքի չորս ծագերուն:



Ճեմարանի ուսուցչական կազմը



Սիմոն Վրացեան եւ Ճեմարանի սաներ












«Ն. Փալանճեան» ճեմարանի ուսանողութեանս տարիներուն (1970-1975) բարեբախտութիւնը ունեցած եմ ականատես վկան ըլլալու «Համազգային»-ի Հայագիտական բարձրագոյն հիմնարկի ծնունդին ու գործունէութեան նախաքայլերուն:

Հիմնադրութեան առաջին տարին՝ 1974-1975, հիմնարկին դասաւանդութիւնները տեղի կունենային ճեմարանի թիւ 3 շէնքին 5-րդ յարկին՝ քիմիագիտութեան տարրալուծարանի դասարանին մէջ, այսինքն՝ մեր գիշերօթիկներուս ննջարաններուն վերեւի յարկը: Եւ մենք, շէնքի վերելակի դրան, թէ աստիճաններուն վրայ յաճախ կը հանդիպէինք Ա կարգի անդրանիկ ուսանողներուն ու մանաւանդ դասախօսներուն. անոնցմէ կը յիշեմ՝ հիմնարկին տնօրէն Երուանդ Փամպուքեանը (անոր կը մաղթեմ քաջառողջ տարիներ), տոքթ. Բ. Փափազեանը, Զարեհ արք. Ազնաւորեանը, Շաւարշ Թորիկեանը, Հրաչ Տասնապետեանը, Գրիգոր Շահինեանը, Արփինէ Քիւրքճեանը եւ ուրիշներ…

Տողերս գրելու հանգրւանին յաջողեցայ տեղեկանալ, որ «Համազգային»-ի օրւան Կեդրոնական վարչութիւնը հիմնարկը կազմակերպելու համար յառաջացուցած էր յատուկ յանձնախումբ մը, որուն մաս կազմած էին հետեւեալ անձնաւորութիւնները. Գարեգին եպս. Սարգսեան, Վահէ Սէթեան, Հրաչ Տասնապետեան, Շաւարշ Թորիկեան, Վահէ Օշական եւ Երուանդ Փամպուքեան:

Հիմնարկը փոքր ընդմիջումներով գործած է մինչեւ 2005 թուական: Անկէ շրջանաւարտ եղած են 146 հոգի, որոնց մեծամասնութիւնը ցայսօր կը գործէ հայկական զանազան կառոյցներու մէջ՝ իբրեւ ուսուցիչ, խմբագիր, հրապարակախօս, բանասէր, գործիչ… եւ այլն, ի պատիւ «Համազգային»-ին ու հայ ազգին: Կը գործեն այնպիսի կառոյցներու մէջ, որոնք ուղղակի թէ անուղղակի կերպով հայ մարդու պատրաստութեան հնոցներ են:

Հարկ է նշել, որ «Համազգային»-ի Հայագիտական բարձրագոյն հիմնարկը 1991-ին Երեւանի պետական համալսարանին հետ ստորագրուած համաձայնագիրով մը կը ստանայ անոր ԵՊՀ-ի հովանաւորութիւնը: Յիշենք, որ անոր 146 շրջանաւարտներէն 30-ը յաջողեցան երթալ Երեւան, ուր ԵՊՀ-ին մէջ շարունակեցին իրենց բարձրագոյն ուսումը՝ ստանալով համապատասխան վկայական:

Հիմնարկը յաջողեցաւ իրագործել դասագիրքերուն պատրաստութիւն, նաեւ հայերէնաւանդ ուսուցիչներու վերապատրաստման դասընթացք (2004-2005):

Տեղին է նշել նաեւ, որ հիմնարկը այդ ժամանակահատուածին յաջողած էր Հայաստանէն հրաւիրել 12 դասախօսներ, որոնք իրենց ներդրումը ունեցան մարդուժի պատրաստութեան նուիրական գործին:

Կամքէ անկախ պատճառներով Հայագիտականի բարձրագոյն հիմնարկը դադրեցաւ գործելէ 2005 թուականին:

«Համազգային»-ը այսօր թափով կը շարունակէ մարդակերտումի, մարդուժի պատրաստութեան իր գործընթացը:

«Համազգային»-ի Կեդրոնական վարչութեան առընթեր, կը գործեն Բէյրութի, Երեւանի, Արցախի (այժմ վտարանդի ի Երեւան) եւ Գիւմրիի նորաբաց գրասենեակները, որոնց աշխատանքներէն են՝ գիտաժողովներու կազմակերպում, հրատարակչական գործեր եւ մշակութային բազմատեսակ աշխատանքներ: Կեդրոնական վարչութեան հովանիին տակ կը շարունակեն գործել

(Շար. 6-րդ էջում)

# Զատկւայ ս. պատարագ Ռահւայի Ս. Աստուածածին եկեղեցում



Զատկական ս. պատարագը մատուցեց Տ. Մարտիրոս քհնյ. Ղուկասեանը: Ս. պատարագի շարականները երգեց Ուրմիայի «Նարեկացի» երգչախումբը, ղեկավարութեամբ Օֆելիա Սայեադեանի: Եկեղեցում ներկայ էին գիւղի հաւատացեալները, որոնք ջօրհնէքին մասնակից դարձան: Ս. պատարագից յետոյ, եկեղեցու շրջափակի սրահում Խնամակալ մարմինը ճաշկերոյթ պատրաստեց, որի հանդիսութեանը ներկայ գտնւեցին բոլոր ներկաները:

**Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-** Ուրբաթ, ապրիլի 5-ին Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան տօնը նշելու համար, Ուրմիայի Ռահւա գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու հոգաբարձական կազմը ս. պատարագ կազմակերպեց: Հոգեւոր ծրագիրը հովանաւորեց Ուրմիայի հոգաբարձական մարմինը, ատենապետութեամբ Վանիկ Յակոբեանսի:



# Ատրպատականի հայոց թեմը մասնակցեց Ղոդսի օրւայ քայլարշաւին



**Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-** Ուրբաթ, ապրիլի 5-ին, առաւօտեան ժամը 11-ից, Ատրպատականի հայոց թեմի Թեմական խորհրդի գլխաւորութեամբ, թաւրիզահայեր իրենց մասնակցութիւնը բերեցին Ղոդսի օրւայ քայլարշաւին: Նշենք, որ Փոքրամասութեան գրասենեակի պատասխանատուն եւս միացել էր թեմի գլխաւորած խմբին:

Յայտնենք, որ Ատրպատականի հայոց թեմի կողմից պատրաստւած պաստառը գլխաւորում էր քայլարշաւը, որին հետեւում էին թաւրիզահայերը, Թեմական խորհրդի գլխաւորութեամբ:

# Դրօշը միշտ գլխիցդ վեր պիտի պահես



***Հայրենիքի զինւորի երդումը սրբազան ուխտ է, որը նա կապում է հայրենի հողի, զէնքի ու իր պատւի հետ, այն ոչ մի ուսադիրների ու կամայական, քաղաքական խաղերի ենթակայ չէ, երբ վտանգւած է ազգի ու հայրենիքի կեանքը:***

***Հայկ Ստեփանեանին կարող ես նոյնացնել «Խաչ Պատերազմի» էպոսական դիւցազնահերոսների հետ, ում ոգին պատերազմի կրակներում թրծւած անպարտելիութեան դրոշմ ունի, զոյգ ոտքերը կորցնելուց յետոյ անգամ Հայկն աւելի ամուր է կապւել իր նպատակներին, իր հայ մարդու ու հաւատարիմ զինւորի երդմանը:***



***-Յարգարժան Հայկ, դուք զինհաշմանդամութիւն ստացած այն զինւորականներից էք, որոնց պայքարը պատերազմից յետոյ էլ շարունակւում է մեր առօրեայ կեանքում, քեզ յաճախ կարող ենք տեսնել բուռն հաւաքների, ցոյցերի մէջ, որտեղ շարունակում էք չհամակերպւել տիրող իրականութեանը: Ինչպիսին էր կեանքը 44-օրեայ պատերազմից առաջ եւ յետոյ, ինչպէս էք ներկայ իրականութեան հետ համակերպման եզր գտնում կամ՝ գտնո՞ւմ էք արդյոք:***

- Ծնւել եմ, սովորել Մասիս քաղաքում, 1999 թ.-ին աւարտել միջնակարգ դպրոցը, ընդունւել եւ 2003-ին աւարտել եմ ՀՀ ՊՆ Վազգէն Սարգսեանի անւան ռազմական համալսարանը, այնուհետեւ ՊՆ հրամանով ու իմ ցանկութեամբ մեկնել ԼՂՀ 1-ին ինքնապաշտպանական շրջան ծառայութեան, որպէս հրամանատար: Երկար տարիներ տարբեր սահմանամերձ զօրամասերում ծառայելուց յետոյ դուրս եկայ բանակից, անցայ սովորական, քաղաքացիական կեանքի: Հրամանատարիս ասացի, որ կը ներկայանամ սահման, երբ պատերազմը սկսւի, իմ տեղը երբեք բաց չի մնայ հայրենիքի պաշտպանութեան մէջ: Յետոյ մեկնեցի ՌԴ: Եկաւ այդ օրը, երբ զանգ ստացայ, որ պատերազմ է, աջ ու ձախ չնայելով պատրաստւեցի ու սեպտեմբերի 28-ի առաւօտեան ես իմ տղերքի հետ մեկնեցի ԼՂՀ: Արցախը, բացի այն, որ սուրբ հող է եղել ու կայ ինձ համար, Արցախը անվտանգութեան երաշխիք էր, այն մի ռազմավարական ու մարտավարական մեծ նշանակութիւն ունեցող տարածաշրջան էր հանդիսանում ՀՀ-ի համար:

Այսօր, երբ կորցրել ենք մեր սուրբ հողը, արդեօ՞ք ապահով են մեր՝ Հայաստանի սահմանները: Որտե՞ղ են մեր ապահով ապրելու, կեանքի իրաւունքի երաշխիքները, երբ ամէն օր թշնամին մեզ պահանջներ է ներկայացնում, անօրինական զաւթումներ իրականացնում եւ ստանում «իրաւունքներ» վաղը, միւս օրը, մտնելու մի տարածք, որտեղի եկեղեցիներն ու շէնքերը մի քանի հարիւր տարով մեծ են իրենց երկրից, իրենց արհեստածին պետութիւնից, զաւթւած հողերի վրայ կառուցած իր քաղաքներից ու գիւղերից: Արցախը մեր տան դարպասն էր, անառիկ ու անմատչելի, դարպասը թշնամիների առաջ բացելու խրատ-պատգամները բազմաթիւ են հայոց պատմութեան ու հայ գրականութեան մէջ, այդ դասերով մեծացած սերունդը իննսունականներին լավ սերուցք տւեց, յաղթանակ կերտող սերունդ, կեանքի, անձնազոհութեան, մեծ նւիրումի ու հայեցի արժէքների պահպանման համար մարտի ելած սերունդ, որը մեզ յաղթանակ ժառանգեց: Արցախը մեր պետութեան երկաթէ վահանն էր, որի կորստի հետ պէտք չէ համակերպւել: Երկար, մօտ 25 օր մենք ամէն գնով պահում էինք մեր դիրքերը՝ հակառակորդին մեծ կորուստներ պատճառելով, ազերիների վախը բռնել էինք արդէն, եկաւ հոկտեմբերի 25-ի չարաբաստիկ օրը, այդ օրը ես կորցրի իմ ընկերներից շատերին, հակառակորդը տեսնելով, որ ցամաքով չի կարողանում ոչ մի կերպ առաջ գալ, սկսեց մեր վրայ անօդաչու ու մի շարք այլ հրետանային զէնքերով կրակ բացել, ահաւոր տեսարան էր, 23 հոգի էինք մնացել դիրքում, բայց նահանջի ոչ մի միտք անգամ չկար այդ մղձաւանջի մէջ, ես նոյնիսկ ծիծաղում էի, որ 23 հոգու վրայ այդքան շատ ու ինտենսիւ կրակ են բացել, ասես մի քանի վաշտի դէմ դուրս եկած լինէին: Վիրաւորւելուց յետոյ հասկացայ, որ մենք այդ օրերին դրանց վախն ու սարսափն էինք մեր 23 տղաներով:

***- Արցախի հայաթափումը, ապրումները, որոնք ունեցանք, որպէս բանական հայ մարդ անասելի ծանր են, ինչպէ՞ս շտկել իրավիճակը, թունելի վերջում երեւացող լոյսը տեսնո՞ւմ էք:***

- Ես կարօտում եմ Արցախը, երեխայի նման կարօտում եմ այդ լեռները, այդ հայրենիքը, որտեղ նաեւ իմ ու ընկերներիս արիւնն է թափւել: Արցախն արիւն է, որ հոսելու է մեր մէջ սերնդէսերունդ, պէտք է չմոռանալ ու չընդունել այն, որը փորձում են որպէս օրենք մատուցել: Մեզ վրայ յարձակւածների անհամաչափ ուժի ու տեխնիկայի կիրառումը եւ այլ գործօններ անհաւասար մարտի բոլոր նախադրեալներն ունէին, բայց անգամ այդ պարագայում մենք պայքարել ենք, նահանջի ոչ մի մտքով: Թունելի վերջում միշտ էլ լոյս կայ, պիտի խաւարը ճեղքելով հասնես այդ լոյսին, գիտելիքի ուժը, դրամի ուժը, միասնականութեան գաղափարը մեր լինել-չլինելու հարցի լուծումը պիտի տան, պիտի գիտակցութիւնն արթնանայ հայ մարդու, որն այսօր անընդհատ ենթակայ է թմբիրի տարբեր տեխնոլոգիաներով, պէտք է ուղղակի չտրւել յուսերժական մրափին եւ աշխատել յանուն հայրենիքի ու հայութեան միասնական շահի:

***– Մարտունակ սպայի ոգին անգամ հաշմանդամութիւնը չի կոտրել, այսօր բազկամարտի հաշմանդամների ֆեդերացիայի կազմում էք, բազում մրցոյթների մասնակից, նաեւ յաղթող: Կեանքը նորովի շարունակելու փո՞րձ է սպորտը, ի՞նչ է այն ձեզ համար, միշտ դրոշակակրի դերում էք եւ Արցախի դրօշն անգամ այն վայրերում էք բարձրացրել, որտեղ կարող էին նկատողութիւններ ու սահմանափակումներ դրւէին ձեր անձի վրայ:***

- Ապրելու ենթագիտակցական որոշումս կայացնելուց յետոյ ես ուղղակի ուժ հաւաքեցի ու «Էրեբունի» հիւանդանոցի բանիմաց բժիշկների օգնութեամբ վերածնւեցի, ծնւեցի որպէս այլ մարդ, որի առջեւ կայ յստակ ճանապարհ, ամէն գնով ոչնչացնել դաւաճաններին, պատրաստւել մեծ յաղթանակների ու ստեղծել այդ յաղթանակները իմ տեղում: Ոտքերս կորցնելուց յետոյ, վերականգնողական բուժման ժամանակ, «Զինւորի տանը» ես սկսեցի փորձել քայլել, ի զարմանս բոլորի՝ շատ լաւ ստացւեց, որովհետեւ ես իմ առջեւ խնդիր ունէի դրած, որը պարտադիր պիտի կատարւէր, յետոյ «Հայ հերոսներ» վերականգնողական կենտրոնում, իմ լավ ընկեր Սարգիս Ստեփանեանի գլխաւորութեամբ, սկսեցի զբաղւել բազկամարտով: Ընդհանուր ունեմ 22 մեդալ, երկու զաւաթ տարբեր երկրներից, վերջին նւաճումներն են, Եւրոպայի մրցումներին իմ քաշային կարգում զբաղեցրել եմ երկրորդ տեղը, իսկ աշխարհի մրցումներին, որը տեղի էր ունեցել Ղազախստանում՝ կրկին անգամ երկար ու մեծ պայքարից յետոյ զբաղեցրի երկրորդ տեղը:

***- Սիմւոլիզմը հայ սպայի ընկալմամբ ի՞նչ կարեւորութիւն ունի պետութեան, պետականութեան եւ ազգի համար ընդհանրապէս:***

- Սիմւոլիզմի առաջին տեղում ինձ համար դրօշն է: Դրօշը հայրենիքի դէմքն ու յաղթանակն է: Նրան միշտ գլխիցդ վեր պիտի պահես, հայրենիք ասւած մեծ երեւոյթի հաւաքականն

**(Շար. 6-րդ էջում)**

## «Լայն...

(Շար.3-րդ էջից)

ես իմ դէմ առճակատման տարբերակը, իսկ այդ դէպքում ես կը դիմեմ կոշտ քայլերի:

Սա սերիալներ սիրող հասարակութիւն է, եւ պէտք է բացատրել մարդկանց, թէ սերիալի լեզւով ի՛նչ են նշանակում այս ձեւակերպումները: Լիբանանի, Սիրիայի եւ մերձաւորարեւելեան տարածքներում հակամարտող ուժեղների վարքագիծը եւ գործալաոճը նկարագրող լաւ սերիալներ կան, յուշէք՝ նայեն:

Օրերս մի հետաքրքիր քննարկման էի հրաւիրուած («ՀայաՔւէ», Ա. Չալաբեան). մեծ լսարան էր, որի 80 տոկոսն ինձ անծանօթ մարդիկ էին: Անծանօթ, սովորական մարդկանց ելոյթները շատ հետաքրքիր էին, եւ դրանք յուշում էին երկու բան՝ մենք մարդկանցով իրար հանգիստ կարող ենք լսել ու իրար հետ աշխատել, եւ մենք կարող ենք հրէշի դէմն առնել:

Անհրաժեշտ են նոր բանաձեւեր.

1. Կանգնեցնել երկրի ներքին դրէֆը-քաոսը. միաւորել բոլորին, որպէսզի բոլորով չկործանւենք,

2. Կանգնեցնել համապետական դրէֆը, թոյլ չտալ, որ Հայաստանը դառնայ ուրիշների ձեռքի խաղալիք եւ աղէտի պոլիգոն,

3. Նոր իշխանութիւնը պէտք է ձեւաւորուի տարբեր տեսակէտներ, գաղափարներ ունեցող ունակ մարդկանցից, լայն համախմբմամբ,

4. Հայաստանում հնարաւոր է արժանապատւութեան եւ կամքի զարթօնք, հնարաւոր է վերականգնել պետութիւնը՝ խելամիտ քայլերով»:

**News.am**

## «Արեւմուտքի...

(Շար.3-րդ էջից)

տեսանկիւնից Ռուսաստանի կատարած ընտրութեան հետեւանքներին:

Ինչու է Արեւմուտքը կարողանում աւելի մեծացնել տարածաշրջանի իր ազդեցութիւնը, քաղաքագէտը պատասխանեց, որ այն ուղիղ արդիւնքն է տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման. որովհետեւ վերջին տարիներին ընթացքում յատկապէս այս տարածաշրջանը տարբեր դերակատարների կողմից դիտարկւել է, որպէս Ռուսաստանի աւանդական ազդեցութեան գօտի եւ տարբեր դերակատարներ այս տարածաշրջանում իրենց քաղաքականութիւնը մշակել եւ հիմք են դարձրել հէնց այդ մօտեցումը, փորձել են որեւէ կերպ չկատարել քայլեր, որը կարժանանայ Ռուսաստանի հակազդեցութեանը, բայց 2022 թւականի Ուկրաինայի պատերազմից յետոյ արդէն տեսնում ենք հիմնովին փոփոխուող տարածաշրջան նաեւ աշխարհաքաղաքական ազդեցութեան մասով:

Պետրոսեանը փաստեց, որ Ռուսաստանի գերկենտրոնացումը ուկրաինական պատերազմին, այդ երկրի կատարած ընտրութեան գերակայութիւնը թուրքական պետութիւնների մասով մասնաւորապէս Ադրբեջանի եւ Թուրքիայի ուղղութեամբ եւ ունեցած շահերի հակադրութիւնները մեծ հաշւով առաջացել է անվտանգային վակուում, որից փորձում են օգտւել Ռուսաստանի հակառակորդները, որի հետեւանքով էլ իր առջեւ ծառացած մարտահրաւէրները լուծելու ուղղութեամբ փորձում է այլընտրանքներ գտնել Հայաստանը եւ այդ այլընտրանքների փնտրտուքը բերում է նոր դերակատարների ազդեցութեան մեծացմանը մեր տարածաշրջանում:

Արմէն Պետրոսեանն անդրադառնալով բրիտանական հանդիպման ֆոնին՝ Իսրայէլ-Իրան յարաբերութիւնների լարւածութիւնը, նշեց, որ այն կարող է նաեւ ռազմական էսկալացիայի յանգեցնել:

«Հայաստանի համար բաւականաչափ մտահոգիչ է այդ լարւածութիւնն առնւազն երկու տեսանկիւնից: Առաջինը այդ լարւածութեան տարածաշրջանային հակամարտութեան վերածւելու հնարաւորութիւնն է, որ չնայած դրան որ Իրանը առնւազն վերջին տարիներին ձգտել է խուսափել եւ չներքաշւել ռազմական էսկալացիայի մէջ, ձախողելով իր հակառակորդների պլանները: Բայց կայ նման հնարաւորութիւն, որովհետեւ Իսրայէլը կոպտագոյն սխալ է գործել թիրախաւորելով Իրանի դեսպանութիւնը Դամասկոսում եւ դա պէտք է ունենար իր հետեւանքները:

Իրանը իր միջազգային իրաւունքով ապահովող հնարաւորութիւնը իրացնելու եւ իր հեղինակութիւնը պաշտպանելու համար պէտք է համաչափ պատասխան տայ բայց լրջագոյն խնդիրն այն է, որ այդ պատասխանը չվերածւի լայնամասշտաբ պատերազմի: Իսրայէլի նպատակը միանշանակ դա է, բնականաբար այդ նպատակը կարող են կիսել նաեւ Իրանի տարածաշրջանի մրցակիցները՝ Թուրքիան, Սաուդական Արաբիան եւ այլք:

Միւս մտահոգութիւններից ըստ Պետրոսեանի՝ Մերձաւոր Արեւելքում ընթացող հակամարտութիւններն են Գազայում ընթացող պատերազմը, Հութիների գործողութիւնները Կարմիր ծովում եւ «Հեզբոլլահ»-ի պարբերաբար Իսրայէլի թիրախաւորումը Սիրիայում, Իրաքում:

«Բնականաբար այս ամէնի համատեքստում մեծանում է լարւածութիւնը Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ եւ այս լարւածութեան աճը խնդիրներ է ստեղծում ՀՀ-ի համար եւ Հայաստանի հետ կապւած խնդիրներում ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի ու Իրանի շահերի համադրելիութեան առումով, որովհետեւ հաւաքական Արեւմուտքը եւ Իրանը Հայաստանի հետ կապւած ունեն բաւականաչափ մօտ դիրքորոշումներ եւ փաստացի Հայաստանը կարող է յաջողել, եթէ կարողանայ իր մարտահրաւէրների չէզոքացման ուղղութեամբ առաւելագոյնս համադրել Հայաստան-Իրան-Արեւմուտք շահերը: Հէնց այս երեք դերակատարներն են, որ ունենում են շատ մօտ շահեր Հայաստանի հետ:

«Սակայն, ցաւօք Մերձաւոր Արեւելքում ընթացող զարգացումները բարդացնում են բոլոր շահակիցների միջեւ համագործակցութեան եւ շահերի համադրման Հայաստանի հնարաւորութիւնները»,- նշեց նա:

**ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ**

## «Հայկական...

(Շար.4-րդ էջից)

հրատարակչատուն-տպարանը, գրատուն-գրատարածը եւ «Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահը՝ տասնեակ տարիներէ ի վեր:

Կեդրոնական վարչութեան հովանիին տակ ամէն տարի Երեւանի մէջ տեղի կունենայ ուսանողական հաւաք-ֆորումը՝ իր դաստիարակչական, ճանաչողական եւ զարգացման ծրագիրներով:

Կեդրոնական վարչութեան հովանիին տակ կը գործեն մանկավարժներ, հայերէնագէտներ, ուսուցիչներ եւ գործիչներ պատրաստելու ծրագիրներ, 2012-էն ի վեր: Այս ծիրին մէջ արդէն վկայուած են 10 շրջանաւարտներ Երեւանի պետական համալսարանէն, եւ անոնք կը գործեն զանազան կառոյցներու մէջ՝ որպէս հայերէնագիտութեան մագիստրոսի ու վարչագիտութեան մասնագէտներ:

«Համազգային»-ի Լիբանանի Շրջանային վարչութեան հովանիին տակ կը գործեն գեղարուեստի 7 դպրոցներ՝ մօտ 800 աշակերտներով: Ան ունի հինգ մասնագիտական մասնաճիւղեր՝ թատերական, երաժշտական, լեզուի, գրականութեան… եւ այլն: Ունի 3 երգչախումբեր՝ «Գուսան», «Այգ» եւ «Կարկաչ» մանկապատանեկան:

Յիշարժան է անոր «Քնար» պարախումբը, ինչպէս նաեւ՝ տասնամեակներէ ի վեր գործող «Գասպար Իփէկեան» թատերախումբը:

Անոր դպրոցներէն յիշենք՝ «Բ. Կանաչեան» երաժշտական քոլէճը, «Գայեանէ» պարի եւ բալէի, «Թորոս Ռոսլին» կերպարուեստի ու «Արեգ» թատերական դպրոցները:

Ինչ կը վերաբերի Սիրիոյ, հակառակ 12-ամեայ տագնապալի իրավիճակին ու շարունակուող տնտեսական պաշարումին, մանաւանդ աւերիչ երկրաշարժին, Սիրիոյ Շրջանային վարչութեան հովանիին տակ կը գործեն չորս միաւորներ՝ «Բ. Կանաչեան»-ի անուան երաժըշտանոցը, «Զւարթնոց» երգչախումբը, Հայագիտական հիմնարկի միաւորները:

Հայագիտական հիմնարկը հաստատուած է 1996-ին, իր դասաւանդութիւնները վերջին երկու տարիներուն կը կատարէ նաեւ առցանց դրութեամբ: Հիմնարկը հաստատող Շրջանային վարչութիւնը այն ատեն կազմուած էր հետեւեալներէն՝ Աստուր Պօղոսեան, Կարպիս Դերձակեան, Զոհրապ Էլէճեան, Րաֆֆի Հարպոյեան, Էմմա Ազարիկեան, Քնարիկ Գասպարեան եւ Մարի Մերթխանեան:

2004-ին հիմնարկը Երեւանի Խաչատուր Աբովեան մանկավարժական համալսարանին հետ կը ստորագրէ համագործակցութեան պայմանագիր մը, որով հիմնարկէն ելած շրջանաւարտները պիտի կարենային իրենց ուսումը այնտեղ շարունակելով՝ ստանալ համապատասխան վկայագիր:

Հայագիտական այս հիմնարկէն բազմաթիւ շրջանաւարտներ հայկական մարդուժի պատրաստութեան զանազան կառոյցներուն մէջ պատասխանատու դիրքեր կը վարեն Սիրիոյ մէջ թէ այլուր:

Սիրիոյ ծայրամասերուն գտնուող ենթաշրջանները (Քեսապ, Լաթաքիա, Դամասկոս եւ Գամիշլի) ունին մասնաճիւղեր, որոնք մերթ ընդ մերթ կունենան թատերական, երաժշտական թէ պարախմբային ելոյթներ:

Սիրիոյ շրջանը ունի նաեւ կերպարուեստի Արշիլ Գորգիի անուան դպրոցը:

Ամերիկայի մէջ կը գործեն երկու Շրջանային վարչութիւններ:

Արեւելեան շրջանին մէջ Շրջանային վարչութիւնը ունի 6 մասնաճիւղեր, որոնք ունին իրենց պարախումբերը: Այնտեղ Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ կը գործէ «Փեթակ» արեւմտահայերէնի իմացութեան ամառնային ճամբարը՝ Շրջանային վարչութեան տնօրինութեամբ:

Արեւմտեան Շրջանային վարչութիւնը ունի ութ մասնագիտական մասնաճիւղեր:

Իսկ Կանադայի Շրջանային վարչութիւնը ունի «Լեւոն Շանթ»՝ հայերէնագիտական դասընթացքը ու հայերէն խօսակցական լեզուի առցանց շարադրական մրցոյթը:

Հիւսիսային Ամերիկայի մէջ ամէն տարի Կեդրոնական վարչութիւնը կը կազմակերպէ «Արթ լինքս»-ի ծրագիրը, որ կը միտի հայ ուսանողները ներբերել հայ գրականութեան եւ մշակոյթի ոլորտներուն մէջ:

Արեւմտեան Եւրոպայի մէջ ամէն ամառ կը կազմակերպուի «Եութ լինքս»-ի ծրագիրը՝ «Արթ լինքս»-ին նման:

Վերը նշեցինք արդէն, որ Կեդրոնական վարչութիւնը 1994-էն ի վեր կը կազմակերպէ ուսանողական հաւաք-ֆորումը:

Անցնող քառամեակին օրւան Կեդրոնական վարչութիւնը յաջողեցաւ հայաշատ Մոսկուայի մէջ հաստատել «Համազգային»-ի առանձնակի շրջանը, որուն հիմնական գործունէութիւնը այժմ կեդրոնացած է կրթական վեցամեայ ծրագիրի մը իրականացման վրայ, փոքր տարիքի երեխաներու համար:

Ընդգծելի իրողութիւն է, որ Արցախի հայաթափումէն ետք «Համազգային»-ի Արցախի, Երեւանի եւ Գիւմրիի գրասենեակները կլանուած են տեղահանուած արցախցի մանուկներու կրթամըշակութային նախաձեռնութիւններով, անոնց հոգեմտաւոր սնունդ ջամբելու, անոնց հոգեվիճակի բարելաւման ու ամրապնդման նպատակով, նաեւ անոնց մօտ միշտ վառ պահելու բնօրրանը՝ Արցախ վերադառնալու յոյսը, կամքն ու հաւատքը:

***

«Համազգային»-ը հայկական մարդուժ պատրաստելու իր 95-ամեայ դժարին ու տատասկոտ, սակայն ազգանուէր ու քաղցր ճամբուն վրայ միշտ դէմ-յանդիման գտնուած է բազմատեսակ դժուարութեանց, սակայն յաջողած է յաղթահարել զանոնք: Սակայն վերջին տասնամեակին իր մարտահրաւէրները, իր դիմաց բարձրացած արգելքները աւելի ցնցիչ բնոյթ ունեցան:

Թուենք անոնցմէ՝ Լիբանանի քաղաքատնտեսական եւ մանաւանդ դրամատնային իրավիճակները, որոնց իբրեւ հետեւանք՝ «Համազգային»-ի տնտեսական միջոցները ամլացան: Բէյրութի նաւահանգիստի աղէտալի պայթումը հարկադրեց, որ համայն հայութեան տնտեսական միջոցները հասցէագրուին բէյրութաբնակ մեր քոյր-եղբայրներուն գոյատեւման կենսական աշխատանքներուն:

Նուազ պատուհասող չեղան Սիրիոյ բազմաբնոյթ (ռազմական-տնտեսական-քաղաքական…) տագնապները, մանաւանդ երբ Սիրիա եւ Լիբանան կքեցան տնտեսական պաշարում-պատերազմի մը լուծին տակ: Անոր վրայ եկաւ գումարիլ աղէտալի եւ կործանարար երկրաշարժի աւերածութիւնները դարմանելու նիւթական ուղղուածութիւնը, ինչ որ կրթամշակութային կեանքը մղեց դէպի լուսանցք:

Այս բոլորին վրայ բարդւեցաւ Արցախի կորուստն ու հայաթափումը, եւ գաղթական արցախահայութեան շտապ օգնելու հրամայականը անշուշտ առաջնահերթ ու անժամանցելի էր:

Մէկ խօսքով, վերոյիշեալ պատուհասները եկան որոշ չափով մը արգելակելու (բայց երբեք՝ կասեցնելու) «Համազգային»-ի կարողականութիւնը, ինչ որ պատճառ դարձաւ կարգ մը ծրագիրներու յետաձգման:

Սակայն ընդգծելի իրողութիւն մըն է, որ «Համազգային»-ը՝ ըլլալով հայութեան ազատ կամքի ու հուժկու կարողութեան կրթամշակութային երանգի արտայայտիչը, կանգ չի կրնար առնել իր սրբազան նպատակները իրագործելու ճամբուն վրայ, այնքան ատեն որ բազմաբիւր հայորդիներ կը հաւատան ու կը դաւանին՝ ու կը հաւատան «Համազգային»-ի տասնաբանեանին, ու նպատակները, հայակերտումի հայկական մարդուժի պատրաստութեան անյետաձգելի անհրաժեշտութեան, անոր նուիրական նպատակներուն ու գործին, չեն զլանար ու չեն սակարկեր իրենց նիւթաբարոյական նեցուկն ու նպաստը տրամադրելու այդ առաքելութեան:

Այստեղ անհրաժեշտ կը նկատեմ նշել, որ վերի տողերուն մէջ արձանագրուածները հակիրճ, ոչ ամբողջական են ու սպառիչ ըլլալու յաւակնոտութիւնը չունին: Բնակավայրի տեղական պայմաններու պարտադրանքով պակասաւոր է անպայման ու հարիւր առ հարիւր տոկոսով չարտացոլացներ «Համազգային»-ի աշխարհացրիւ կառոյցին ամէն մանրամասնութիւն: Ուստի այդ բացթողումներուն համար ընթերցողներուն (մանաւանդ՝ համազգայնականներուն) ներողամտութիւնը հայցելով՝ կընդգծեմ, որ վիթխարի է «Համազգային»-ի գործը հայկական մարդուժի պատրաստութեան մէջ:

Ու որպէս վերջաբան, ապագայատեսիլ հայեցքով՝

- Օ՛ն, սլացիր երիվա՛ր,

Նպատակս տկարութիւն չի ճանչնար:

**ԿԱՐՕ Վ. ՄԱՆՃԻԿԵԱՆ**
**Քեսապ**
**մարտ 2024**
**«Ազդակ»**

## Դրօշը...

(Շար.5-րդ էջից)

է, որ կարող ես ձեռքդ վերցնել ու հասկանալ, որ հայրենիքդ է քո ձեռքերում, որ այն պահելու պատասխանատւութիւնը քոնն է:

***– «Հայկի թեւեր». ի՞նչ գործունէութիւն է ծաւալելու եւ ի՞նչ կարեւորութիւն ունի ձեր այս նախաձեռնութիւնը, ինչպէ՞ս էք պատկերացնում անելիքները, որոնք պիտի կեանքի կոչեն կարեւոր նշանակութիւն ունեցող այս գործունէութիւնը:***

– «Հայկի թեւեր»-ը նշանակում է, որ Հայի տեսակը չի կոտրւում ոտքեր կորցնելուց, մարմնի այլ մասերի կորստից յետոյ անգամ, այլ հակառակը՝ պատրաստւում է իր ոգեղէն ԹԵՒԵՐՈՎ ուժգին հարւած տալ թշնամուն օդից, երկնքից՝ արծւի պէս: Մենք պարտաւոր ենք պատրաստւելու, պիտի ջախջախիչ հարւած տանք հակառակորդին, որպէսզի իրականում խաղաղութիւն տիրի իմ հայրենիքում: Պէտք է լաւ զինւած ու մարտունակ բանակ ունենալ, պէտք է ուժեղանալ ամէն կերպ: Ես ամէն տեղ դրօշս պիտի բարձրացնեմ: Աշխարհը պիտի ամէն բնագաւառում տեսնի Հայիս ուժը ու բազուկը, հասկանալով, որ հայը իր դրօշը բարձրացրել ու բարձրացնելու է ամէն երկրում՝ անկախ ներկայ երկրներից, որը ես միշտ անում եմ հպարտօրէն, անվախ ու սիրով:

***- Անհատի մակարդակով հնարաւո՞ր է իրականութիւն փոխել, թէ՞ այն շատ արագ թիրախաւորւում է ապազգային ուժերի կողմից:***

- Անհատի ուժը եթէ կայանում է հայրենասիրութեամբ՝ ապա նա չի կարող լինել մենակ: Անհատի ուժի դէմ անգամ պետութիւններն են անզօր, համաշխարհային պատմութիւնը լի է փաստերով: Անհատը կարող է նոյնիսկ պատմութեան ընթացքը փոխել, եթէ նրա գործն արդար է ու Աստծով, մեծն Թեհլերեանը թող լինի օրինակ:

***- Որպէս պատերազմով անցած զինւոր, ո՞րն է առաջնային այսօր մեր երկրի փոքրացող սահմաններին տէր լինելու եւ այն անխախտ պահելու համար, իրականութեան ընկալումից շա՞տ ենք հեռու մեր ապրելակերպով եւ ընդհանրապէս կառավարման կարգով, թէ՞ սա մէկ այլ քաղաքական հաշւարկ է, որով պիտի կարողանանք շրջանցել աշխարհին պատած փոթորիկի կործանարար ալիքները:***

- Քանի որ մեր երկիրն այս պահին վտանգաւոր վիճակի մէջ է, մենք պիտի առաջինը սիրենք իրար: Երկրորդը՝ հասկանանք, որ հակառակորդին մինչեւ ծնկի չբերենք, խաղաղութիւն չի լինի ու վերջ: Երրորդ՝ կարեւորը դաւաճաններից պէտք է ազատւել: Փոթորիկը կանգնեցնելու համար կառավարական ձեւը պիտի փոխւի:

**Հարցազրոյցը՝**
**ԱՐՄԻՆԷ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ**

**«Առաւօտ» օրաթերթ**



## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում միութեանս անդամ Ռազմիկ Տէր-Յովհաննիսեանին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՀՐԱՆՏ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԻՐԱՆԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ**

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում՝ Իրանի Իսլ. խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանին եւ Ալենուշ Շահվերդեանին, Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեանը, Հ. Մ. «Սիփան» միութեանը, Հայոց ազգային «Արաքս» դպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին, ծնողական խորհրդին եւ աշակերտութեանը, Իրանում, Հայաստանում եւ արտասահմանեան այլ երկրներում բնակւող բոլոր հարազատներին, բարեկամներին եւ ընկերներին, ովքեր անձամբ, հեռախօսով կամ մամուլով վշտակցեցին մեզ, մեր կրած անփոխարինելի կորստի՝

**ԷԼԻՒՐԱ ՄՈՒԹԱՖԵԱՆՑԻ (ԱՂԱՅԵԱՆ)**

ցաւալի մահուան առիթով:

**ԱՂԱՅԵԱՆ ԵՒ ՄՈՒԹԱՖԵԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ**


**ԱԼԻՔ Օրաթերթ**

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۸۵۶۷ – ۸۸۷۶۱۱۵۴ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir


### Հայաստանը....

(Շար. 2-րդ էջից)

*ֆինանսների թափանցիկութեան բացակայութեան իրողութիւններով»:*

*Արդիւնքում, Հայաստանի ժողովրդավարութեան միաւորը 3.11-ից իջել է 3.07-ի:*

*«2023 թւականին Հայաստանում ամենակարեւոր քաղաքական գործընթացներն ու խնդիրները վերաբերում էին ինչպէս անվըտանգութեան խնդիրներին, մասնաւորապէս՝ Ադրբեջանի հետ յարաբերութիւններին, այնպէս էլ չճանաչւած, բայց դէ ֆակտօ անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան (Արցախ) 10-ամսեայ շրջափակմանը, սեպտեմբերին Ադրբեջանի ագրեսիայի հետեւանքով հետագայ էթնիկ զտումների հետ»,- նշւած է զեկոյցում:*

*Համաձայն Freedom House-ի, «Հայերի ամենակարեւոր մտահոգութիւնները ոչ միայն եղել են ազգային անվտանգութեան այս խնդիրները, այլեւ ձեւաւորել են ներքաղաքական լանդշաֆտը, որտեղ ընդդիմութիւնը եւ բնակչութեան մեծ հատւածը քննադատում են կառավարութեանը Լեռնային Ղարաբաղի հարցում քաղաքականութեան ձախողումների համար»:*

*Կազմակերպութիւնը նշում է, որ անվըտանգութեան իրավիճակի վատթարացումը միայն խորացրել է Հայաստանի խորհրդարանումքաղաքականբեւեռացումը Նիկոլ Փաշինեանի ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան եւ ընդդիմութեան միջեւ՝ «խաթարելով կառուցողական երկխօսութիւնը կրիտիկական հարցերի շուրջ»:*

**Yerevan.today**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Տէր-Յովհաննիսեան գերդաստանին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՀՐԱՆՏ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Տէր-Յովհաննիսեան գերդաստանին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՀՐԱՆՏ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԵԱՐԻՋԱՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ**


ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթին՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել «Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համաձայնելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر سخت افزار
ارتقاء سیستم نرم افزار
سرویس در محل شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir



دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարուայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4
نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity
دفتر ایروان
خیابان نالباندیان – شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237
Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով





Արդեօք մինչ այժմ «Սիրոյ ծառ» ցանե՞լ էք
آیا تا به حال درخت عشق کاشته اید؟
Ձեր սիրոյ եւ գթութեան սերմերը ցանէք «Մահաք»-ում, որպէսզի դրանց մրգերը առողջութիւն հանդիսանան քաղցկեղով հիւանդ հազարաւոր մանուկների համար:
Ձեր տնկած ծառի հովանու ներքոյ՝ մանուկները կարող կը լինեն ապագային յոյսով նայել:
Ամսական կարգով վճարելով քաղցկեղով հիւանդ մէկ մանուկի դեղորայքի եւ բուժման ծախսը՝ միացէք «Մահաք»-ի մեծ ընտանիքին:
Համագործակցութեան հեռախօսահամար՝
021-23540
محک
مؤسسه خیریه حمایت از کودکان مبتلا به سرطان
mahak-charity.org
از اینکه به پیام ما توجه کردید، سپاس گزاریم.
برای بازدید از بیمارستان محک که حاصل عشق شماست، با شماره ۰۲۱-۲۳۵۰۱۲۱۰ تماس بگیرید.

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
QeshmAir
هواپیمایی آسمان IRAN ASEMAN AIRLINES
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը, իսկ
սկսած ապրիլի 16-ից շաբաթ եւ երեքշաբթի օրերը յաւելեալ թռիչքներ են կատարւելու «Ասեման» ավիաընկերութեան միջոցով
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰



## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՀՐԱՆՏ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ ուրբաթ, ապրիլի 12-ին:

Թաղումը կը կափարուի կիրակի, ապրիլի 14-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ կէսօրուայ ժամը 12:00-ին ներկայ գտնուել Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան մօտ՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Մարգարիտ (Մագի) եւ Անետ Դանիէլեաններ՝ այրին եւ դուստրը:

Սարօ եւ Ծաղկուշ Դանիէլեաններ՝ եղբայրը եւ իր կինը:

Ալվարդ Ղարախանեան՝ քոյրը:

Ծաղկուշ Դանիէլեան՝ քոյրը:

Արա եւ Նադիա Դանիէլեաններ՝ եղբայրը եւ իր կինը:

Սաքօ Յակոբեան՝ աներորդին՝ ընտանեօք:

Էմիկ Յակոբեան՝ քենին՝ ընտանեօք:

Ջաւէն Յակոբեան՝ աներորդին՝ ընտանեօք:

Հրաչ եւ Կարինէ Ղարախանեաններ՝ քրոջ որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Յասմիկ Ղարախանեան՝ քրոջ դուստրը:

Լորեթա եւ Սերժիկ Հաքեաններ՝ եղբօր դուստրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Լեռնիկ եւ Ռայմոնդ Աղանեանցներ՝ եղբօր դուստրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Լուսինէ եւ Ռուզաննա Դանիէլեաններ՝ եղբօր դուստրերը:


املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ - ۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی



«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده



Հեռ.՝ 88523388






Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES

هواپیمایی قشم QeshmAir

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

ستی Sati

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «نادبه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


### ԻՍՐԱՅԷԼԻ....

(Շար. 1-ին էջից)

*երկրորդական նշանակութեան խնդիրներ են, կարեւորը՝ էֆեկտիւութիւնն է:*

*Իրանը շարունակում է մատը բաց ներւի վրայ պահել: Իրանի կոշտ պատասխանի ուրւականն ամենօրեայ ահ ու սարսափի է վերածել առանց այն էլ հոգեբանօրէն քայքայուած ու հիւծուած իսրայէլական հասարակութեան եւ կառավարութեան համար:*

*Հէնց այս համատեքստում է, որ ցանկացած հապճեպ, չհաշւարկուած քայլ կարող է երկնքից թափւող մանանայի էֆեկտ ունենալ Նեթանիահուի կառավարութեան խորտակւող նաւի համար՝ դառնալով նրա փրկօղակը: Ներկայ դրութեամբ, Իրանի հետ պատերազմն իդէալական հնարաւորութեան է կարող վերածւել Իսրայէլի համար, եւ հէնց այդ հնարաւորութիւնից է, որ պէտք է զրկել նրան:*

## Իրանը ԱՄՆ-ին նախազգուշացրել է յարձակման մասին՝ Իսրայէլի հետ հակամարտութեանը միջամտելու դէպքում

*«ԱԼԻՔ» - Իրանն արաբական երկրների միջոցով Վաշինգտոնին հաղորդագրութիւն է փոխանցել, որ եթէ ԱՄՆ-ը միջամտի Իսրայէլի եւ Իրանի միջեւ հակամարտութեանը, տարածաշրջանում ամերիկեան ուժերը յարձակման կը ենթարկւեն: Դրա մասին ըստ՝ ԻՌՆԱ-ի յայտնել է Axios լրատուական-վերլուծական պորտալը:*

*Axios-ը վկայակոչելով ամերիկացի պաշտօնեաներին, յայտնել է, այս շաբաթւայ սկզբին Իրանը մի քանի արաբական երկրների միջոցով ուղերձ է յղել Բայդէնի վարչակազմին, որ եթէ ԱՄՆ-ը միջամտի Իսրայէլի եւ Իրանի միջեւ հակամարտութեանը, տարածաշրջանում ամերիկեան ուժերը յարձակման կը ենթարկւեն:*

*Axios-ը յաւելել է, որ Վաշինգտոնում եւ Թել Աւիւում կարծում են, որ Իրանն Իսրայէլի դէմ յարձակումը կիրականացնի բալիստիկ ու թեւաւոր հրթիռների եւ ԱԹՍ-ների միջոցով:*

*Ըստ զեկոյցի՝ ԱՄՆ պաշտօնեաներն ասել են, որ Բայդէնի վարչակազմն Իսրայէլից պահանջել է հնարաւոր պատասխան քայլերի մասին որոշում կայացնելուց առաջ, տեղեկացնի Վաշինգտոնին, որպէսզի Սպիտակ տունը կարողանայ իր կարծիքն ասել:*


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ



SET Coffee

فروشگاه: هفتم تیر قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه سِت


## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱՐՄԻԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ

ցաւալի մահը, որը փեղի ունեցաւ հինգշաբթի, ապրիլի 11-ին:

Թաղումը կը կափարուի կիրակի, ապրիլի 14-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ կէսօրուայ ժամը 12:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Հիւսիսային Քարգար պող,, «Ղալբէ Թեհրան» հիւանդանոցի դիմաց, Շոքրօլլահի պող., Սալեհի պող., Էնթեսարիէ պող., համար 36, 4-րդ զանգ, 2-րդ յարկ:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Անահիտ Ղազարեան (Շահնազարեան)՝ այրին:

Արթուր, Լիդա եւ Մարիա Ղազարեաններ՝ որդին, հարսը եւ թոռնուհին:

Ալին, Վահէ, Փաթրիկ եւ Դերիկ Առաքելեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռները:

Անահիտ Մովսիսեան՝ քոյրը՝ ընտանեօք:

Անուշ եւ Մայիս Ենոքեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Ռոբերտ եւ Լուսիկ Ղազարեաններ՝ հօրեղբօր որդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Ժուլիէտ Ղազարեան՝ հօրեղբօր դուստրը՝ ընտանեօք:

Դիանա, Ռուբինա, Սեդա եւ Վահագն Շահնազարեաններ՝ քենիները եւ աներորդին:

Դիանա, Ջաւիկ եւ Նազիկ, Ռուբիկ եւ Վիոլետ Մարտիրոսեաններ՝ հարազատները՝ ընտանեօք:

Ռիքարդօ եւ Ռիտա Վարդանեաններ՝ ընտանեօք:

Մադլէն Առաքելեան՝ խնամին՝ ընտանեօք:

Ղազարեան, Շահնազարեան, Տէր-Ղազարեան, Թարոյեան, Սեւոյեան, Միքայէլեան, Ղազարեան, Մակարեան, Արաքիս, Բարոյեան եւ Մուսայեան ընտանիքներ՝ հարազատները:


ՔԱՐԻՍՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09121193212